ԾԵԾԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏԺԱՄԻՋՈՑ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ

ԾԵԾԸ՝ ՈՐՊԵՍ «ՍՈՎՈՐԵՑՎԱԾ ՎԱՐՔԱԾՆ»

Ծեծը մոդել է, որը ժամանակին կիրառվել է այն կիրառողի նկատմամբ, որը միևնույն ժամանակ բավականին անարդյունավետ է, քանի որ երեխաների վարքը մնում է նույնը, դեռ նույնիսկ ավելանում են այլ խնդիրներ՝ վախեր, ճնշվածություն, ագրեսիվություն և այլն:

Ծողները կիրառում են ծեծը սեփական անզորությունից: Անզորությունը նոր ուղիներ փնտրելու, այլ վարք դրսևորելու, սեփական վախերը հաղթահարելու, հեղինակությունը հաստատելու մեջ է:

Ցավից խուսափելու համար երեխան սովորում է ճնշել իր կամքը, չարտահայտել իրական ցանկություններն ու պահանջմունքները,

դրսևորել «ցանկալի և սպասվող» վարք կամ, ըդիակառակը, կուտակել ներքին չարություն, ագրեսիա, և մեծանալով՝ դա արտահայտել շրջապատի վրա:

ԾԵԾԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏԺԱՄԻՋՈՑ

Ծեծի կիրառումը հանգեցնում է ծնող-երեխա փոխհարաբերությունների խախտմանը:

Կարող են ի հայտ հետևյալ խնդիրները՝

- Երեխան դառնում է ագրեսիվ, շուտ բարկացող, բռնկուն, սովորում է, որ ագրեսիայի և դաժանության դրսևորումը նորմալ է և դրանք կարելի է կիրառել հետագա վարքում: Ծնողները բացասական մոդել են առաջարկում երեխային, որը նա հետագայում կարող է կիրառել իր կյանքում
- Երեխան զգում է թե՛ ֆիզիկական, թե՛ հուզական ցավ: Ցավի ժամանակ երեխան դառնում է ավելի խոցելի, նա «փոքրանում է», ընկնում է ինքնագնահատականը
- Ծեծը անհարգալից վերաբերմունքի ցուցանիշ է, ուստի երեխան սովորում է անարգել շրջապատին

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

- Ծեծը խախտում է մեծահասակ-երեխա վստահության հիմքերը, երեխան դադարում է իրեն զգալ ապահով, պաշտպանված, իր համար ամենակարևոր մարդիկ դառնում են «վտանգավոր»

- Ծեծը չի աշխատում: Եթե ծնողը իր ուզածին հասնելու համար պարբերաբար ծեծում է երեխային, նշանակում է երեխան չի հասկանում, թե իրենից ինչ են սպասում, կրկնում է իր անցանկալի վարքը

- Երեխան սովորում է այդ պատժամիջոցին: Նա սովորում է մի քանի րոպե ցավ զգալ, սակայն հետո անում է նույնը կամ ավելի վատ արարքներ, քանի որ ուղղակի չարանում է աշխարհի հանդեպ

- Ծնողները ունենում են մեղքի, անվստահության, սեփական դիրքերի խարխլման զգացողություն: Եթե ծնողը գիտակից է, նա լավ հասկանում է, որ նման պատժաձևը միայն ու միայն թուլացնում է իր դիրքերը:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: